

**ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ
ՏՎՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԵԶ
(ԱԿՆԱՐԿ)**

Սույն թվականի հունիսի 23-ին, ձեռամբ ազգիս սրբազնագույն հովվապետ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի և խարտավիյակությանը Հայկազուն Ե. վարդապետ Նաջարյանի, Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, Կուրբ Պատարագի ընթացքին, տեղի ունեցավ վարդապետական չորս աստիճանի՝ Մասնավոր վարդապետության տվչություն: Վարդապետության զավագան ստացան Մայր Աթոռի միաբան Տ. Վազգեն արեղա Միրզախանյանը և տողերիս հեղինակը:

Համաձայն «Մաշտոց» ծիսամատյանի սահմանած կարգի և միջնադարյան Հայաստանի ուսումնագիտական հաստատություններում ու վարդապետարաններում ընդունված վարչական սովորույթի, մեր ուսումնասիրությունները ներկայացնելուց առաջ, հարկ ենք համարում ամփոփ տեղեկություններ հաղորդել վարդապետության զավագանի տվչության պատմականի վերաբերյալ:

Ինչպես հայտնի է, Բրիտոսոս Իր աշակերտներին տվեց երկու իշխանություն՝ քահանայական և քարոզչական: Բահանայական իշխանության գործադրման համար եկեղեցու ծոցում ստեղծվել է նվիրապետական կարգ՝ սարկավագության, քահանայության և եպիսկոպոսության աստիճաններով: Իսկ քարոզչական իշխանության գործադրման համար՝ վարդապետների կարգը, որ այսօր Հայ եկեղեցում գործում է երկու աստիճաններով՝ Մասնավոր վարդապետություն և Երայրագույն վարդապետություն:

Հայ եկեղեցու պատմության մեջ վարդապետները հիշվում են տակավին Դ դարում: Այս մասին վկայություններ կան Զենոբ Գլակի և Փավստոս Բուզանդի պատմագրական երկերում: Հայոց եկեղեցական կանոնների համաձայն, վարդապետների պատասխանատվությունների և իրավունքների մեջ մտել են.

ա) Սահմանել զղջացող մեղավորների (թե՛ հոգևորական, թե՛ աշխարհական) ապաշխարության ժամկետը և ապաշխարությունից հետո թույլատրել մերձենալու Սուրբ Խորանին:

բ) Բանադրել և իր բանադրածին արձակել (թե՛ հոգևորական և թե՛ աշխարհական): Վարդապետը կարող է զրկել քահանային իր աստիճանից *«վասն ամարժան վարուց»*: Դվինի Բ ժողովի Ե կանոնը պատվիրում է , որ եկեղեցու պաշտոնյաները *«կայցեն վարդապետին ի հնազանդութեան ամենայն յաւժարութեամբ»*:

գ) Խրատել *«գտահակսն եւ գյուլացեալսն ածել ի կարգ հաւատոյ... գործ է վարդապետի»*:

դ) Հաստատել եկեղեցական դավանաբանական, ծիսական և այլ կարգ ու կանոնին վերաբերող սկզբունքներ:

ե) Տնօրինել ժառանգական և ամուսնության հարցերը: Համաձայն Մխիթար Գոշի, վարդապետները *«գիտակ են իրեանց դատաստանին»*:

զ) Մխիթար Գոշն իր «Ռատաստանագրքի» «*Յադագս դատաստանաց վարդապետաց*» գլխում ասում է, որ հայրապետը կամ եպիսկոպոսը, որպես խորհրդատու, կարող է վարդապետ պահել: Այս մասին խոսում է Օսև Ա. Երեսն Ծնորհայիմ՝ պատվիրելով, որ վարդապետները «*առաջին զճառայակիցսն կերակրել ըստ առնտարանական հրամանին, երկրորդ՝ զթշնամիսն ճշմարտութեան, որ է հակառակին հաստոյն բանի եւ արինաց Աստուծոյ եւ աւանդութեանց եկեղեցոյ՝ ըմբերանել աստուածային գիտութեամբն, զի մի՛ զպարզամիտսն ի ժողովրդոցն պատիր բանիք ձգեսցն ի կորստեան*»:

Ունենալով այսպիսի մեծ հեղինակություն՝ վարդապետները եպիսկոպոսների կողքիմ միշտ ներկա են եղել Հայ Եկեղեցու գումարած Ազգայիմ Եկեղեցական ժողովներին: 591 թ. Կ. Պոլսի, 639 թ. Կարիճի, 1307 և 1342 թթ. Սսի ժողովներին իրենց գործում մասնակցությունն են բերել նաև վարդապետները:

Մի շարք պատմական վկայությունների համաձայն, եպիսկոպոսական Աթոռներիմ գուգահեռ գոյություն են ունեցել նաև վարդապետական Աթոռներ՝ իրենց վարչական համգամաքով: Այսպես, երբ Ս. Մեսրոպ Մաշտոցը գնում է Կ. Պոլիս, Թեոդոս կայսրը և Աստիկոս պատրիարքը «*կարգեն գտոքք վարդապետն ընդ վարդապետութեան աթոռակալութեան սրբոյն Յովհաննու Ոսկերերանի եւ այլոց քաջաց եւ գլխատր վարդապետացն*»: Ստեփանոս Օրբելյանը հաղորդում է, որ Դ դարի երկրորդ կեսին, Հովակիմ եպիսկոպոսի ժամամակ, «*զվարժապետութեանն Միւնեաց զնախազահութեանն զնիտ հրամայեցին Գէորգեայ Շուդատու վարդապետի*»: Վարդապետական Աթոռի գոյության արձագանքները պահպանվել են միմչև ԺԹ դարասկիզբը:

Մանավանդ հիմ Եկեղեցում վարդապետական աստիճանների տվչությունն ունեցել է իրավական բնույթ: Այդ աստիճանները տրվել են վարդապետների կողմից՝ իրենց առավել աչքի ընկնող և պատրաստված աշակերտներին: Այս տվչությունը կայացել է վարդապետական գավազան հանձնելով: Սուրբ Գրիգոր Տաթևացին այս տվչության համար գրել է ծիսական մի մասնահատուկ կարգ: Վարդապետների գիտական մակարդակն ապահովելու համար Մխիթար Գոշը հանձնարարում է՝ վարդապետական տվչությունը կատարել երկու կամ երեք վարդապետների հավանությամբ: Իսկ 1615 թ. Երուսաղեմի Եկեղեցաժողովը Ը կանոնով հանձնարարում է. «*Մի համարձակեցի որ վարդապետ անխտրաքար տայ գիշխանութիւնն վարդապետութեան ամենայն ումեք, եթէ ոչ իցէ նուիրեալն կատարեալ ուսմամբ եւ առաքինութեամբ...*»:

Համաձայն Մաշտոցի, վարդապետական աստիճաններ տվողը Մեծ վարդապետն է: Ի նկատի ունենալով վարդապետական աստիճանի բարձրությունը՝ այսօր Հայոց Եկեղեցին այս տվչության շնորհաբաշխությունը վերապահում է միայն Կաթողիկոսին, որի հրամանով կարող են տրվել այս աստիճանները: Ծնորհաբաշխելու իրավունք ունի նաև Մասնավոր և Մայրագույմ վարդապետական աստիճաններ ունեցող եպիսկոպոսը: Սա բխում է աստվածաբանական այն դոգմից, թե մեկը չի կարող բաշխել մի շնորհ, որն ինքը չունի: Բուն վարդապետը Մայրագույմ վարդապետն է, իսկ սովորական վարդապետը վարդապետության թեկնածուն է միայն, որ հայտնի է «*Մասնավոր վարդապետ*»

անվամբ: Վարդապետական գավազանի տվչությունը կատարվում էր թեկնածու հոր ավարտաճանդի հրապարակային պաշտպանությունից հետո միայն: Ձեռագիր մատյանները (տե՛ս մասնավորաբար Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 631 ձեռագիրը (թերթ. 49 ա - 81 ք)) մեզ են ավանդել Գլածորի վանական համալսարանի շրջանավարտների վարդապետական ավարտաճանդը, որոնք գրված են ժամանակի աստվածաբանական գիտելիքների փայլուն իմացությամբ:

Մեր ուսումնասիրության նյութը Ը դարի մեծանուն մատենագիրներ Հովհան Օձնեցու և Խոսրովիկ Թարգմանչի քրիստոսաբանությունն է: Հայ Եկեղեցու որդեգրած աստվածաբանական համակարգի ընդհանուր ետնախորքի հիման վրա վեր ենք հանել Հ. Օձնեցու և Խոսրովիկ Թարգմանչի քրիստոսաբանության կարևոր հիմնակետերը և մուտք գործել նրանց՝ աստվածաբանական մտակառուցման գլխավոր օրինաչափությունների մեջ: Ի տարբերություն դավանաբան մյուս հեղինակների, Օձնեցու և Խոսրովիկի քրիստոսաբանությունն աչքի է ընկնում դավանաբանական իրողությունների նրբին համադրմամբ, աստվածաբանական խորհրդածությունների հիմնավորվածությամբ, տեսական խորունկ թափանցումներով: Այս է պատճառը, որ հետագայի մատենագիրները, պատշաճը հատուցելով, առ ի հարգանս աստվածաբան հեղինակների դավանական սխրանքի, բազում վկայություններ են բերում նրանց երկերից: Օձնեցու և Խոսրովիկի քրիստոսաբանությունը կարևորելի է դառնում նաև այսօր՝ Ազգային Եկեղեցու ընդունած դավանական սկզբունքների հայտնութենական արժեքը հաստատագրելու առումով:

Իսկ Տ. Վազգեն աբեղա Միրզախանյանի ավարտաճան ունի աղբյուրագիտական բնույթ: Այն խորագրված է «Մ. Գրիգոր Տաթևացու «Հարցմանց գրքի» և Ռսկեփորիկի հայրախոսական աղբյուրները»: Հայագիտության մեջ առաջին անգամը լինելով, քննության են ենթարկվում Հայ Եկեղեցու աստվածաբանության համար քացատիկ կարևոր դեր կատարած Մ. Գրիգոր Տաթևացու (1346-1410 թթ.)՝ այդ երկու աշխատության մեջ առկա Եկեղեցու հայրերի զանազան երկերից բերված վկայությունները: Աղբյուրների վերհանումն ու զնահատումը նպատակ ունի պարզելու աստվածաբանական այն հարուստ գիմանոցը, որը, հանձին Մ. Գրիգոր Տաթևացու, օգտագործում էր Հայ Ազգային Եկեղեցին՝ ընդդեմ Արևմուտքին ծառայագրված միարարների օտար գաղափարախոսության:

Լիաճույս ենք, որ մեր ուսումնասիրությունները կարող են օգտակար լինել անցյալի հոգևոր, ազգային արժեքներն առավել խորությամբ հետազոտելու և արժևորելու ճանապարհին, որովհետև միայն անցյալի քաջ իմացությամբ մենք կարող ենք մեր այսօրվա պետքերը հոգալ՝ անցյալի հոգևոր, գիտական նվաճումները լավագույնս ի սպաս դնելով ներկային:

Լիաճույս ենք նաև, որ կկարողանանք արդարացել վեհափառ Հայրապետի սպասելիքներն ու կանկալությունները՝ ի փառս Աստծու և Եկեղեցու շինության ու պայծառացման:

ՄՈՎՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՎՍԻՍԹԱՆ

Մոսկվայի հայ համայնքի հոգևոր հովիվ